նեցայ, մի յաղթանդամ տապանաքարի վերայ էի, ուշադիր կը դիտէի Մասիսի գագաթն, որ ուղղակի յարևելս կերևէր Սինակ լեռան գագաթից. կրօնասէր Հայեր զիս զգուշացուցին առարկելով թէ արածս մեղք է, այն գերեզմանը ուր կամ՝ մի մեծ մարդ թաղեալ կայ, իւր ժամանակ մի հայի գլուխ մի սոխ անգամ չէր արժեր, այս գերեզմանի մէջ հանգստացող Ալէքսանդրն, որ Պօլսեցի, նոյն ժամանակի բէկի գանձապահն էր, որ մեծ ազդեցութիւն ունէր շատ և շատ մարդեր ազատած էր կախաղանէ։

Այս գերեզմանը ուր կանգնած էի, Հայեր Մասիսից աւելի բարձրացուցին, որով ստիպուեցայ հետաքրքրուիլ, տապանաքարի արձանագրութեան մէկ մասն որ հողի տակ մնած էր, յստակել տուի և օրինակեցի։

«Տապանիս այս աւաղելի
Է որդի ումեմն միամօրի,
Հասակաւ երեք տասն և երրորդի
Որոյ անուն Աղէքսանդրիչքի
Եղև զրաւ սորին կենի,
Ի թուին Ռ. Թ. երկհարիւրի
Եւ ի տասներորդն չորրորդի
Եւ ի եօթն նոյեմբերի
Խնդրեմ, տեսողքդ տալ ողորմի
Լիցի արժան կենաց դրախտի»։

Մի այլ տապանագիր

«Քրիստոս որդի հօր Աստուծոյ
Վասն անարատ ծնողի քոյ